# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2021 թվականի N 1347

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 699/109 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդվարդ Ռաֆիկի Գևորգյանի դիմումը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացու թիվ 33 00 212819 անձնագրի (նոտարական ակտի կոդ: 843-20210610-64-5161958) ռուսերենից թարգմանությունը և 20.08.1950 թվականին տրված թիվ ЗЖ N 260259 ծննդյան վկայականը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչի փողոցի թիվ 49 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի սեպտեմբերի 01-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 699/109 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Էդուարդ Ռաֆիկի Գևորգյանը» բառերը փոխարինել «Էդվարդ Ռաֆիկի Գևորգյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Գևորգյան Էդուարդ Ռ.» բառերը փոխարինել «Գևորգյան Էդվարդ Ռաֆիկի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 30
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1348

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 15/16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԱՆԱՎԱՐՏ ՀԻՄՔԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2006թ. թիվ 718-Ն որոշումներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս թիվ 15/16 հասցեում գտնվող 735.8քմ մակերեսով հողամասի և 687.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 615.9քմ) պետական բնակելի ֆոնդ հանդիսացող բազմաբնակարան բնակելի շենքի անավարտ հիմքերի նկատմամբ:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 15/16 բազմաբնակարան բնակելի շենքի անավարտ հիմքեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1349

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 44-8/1, ԹԻՎ 44-8/2 ԵՎ 44-8/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱՄՎԵԼ ԳԱԳԻԿԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Գագիկի Մատինյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03052021-06-0004, թիվ 03052021-06-0036 և թիվ 03052021-06-0002 վկայականները, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 44-8/1, թիվ 44-8/2 և թիվ 44-8/3 հասցեներում գտնվող Սամվել Գագիկի Մատինյանին սեփականության իրավունքով պատկանող 71.7քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և տնտեսական սենյակները՝ համաձայն «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 44-8/1 տնտեսական սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1350

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 15/11 ԵՎ ԹԻՎ 15/11-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15112019-06-0052 և թիվ 15112019-06-0051 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 15/11 և թիվ 15/11-1 հասցեներում գտնվող, Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող ընդհանուր 0.001925հա մակերեսով հողամասը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բաղրամյան պողոտա, թիվ 15/11 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1351

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ Մ/Մ 35Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 25 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դավիդ Սահակյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1741699 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման 09.04.2021թ. թիվ ՄՏ-09042021-06-0279 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Մ/Մ 35 ա հասցեում գտնվող «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.0009հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 35-1 հողամաս:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 14 հունվարի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Մ/Մ 35Ա հասցեում գտնվող «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 25 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1352

### ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՍՈՆԱ ԱՐՏԵՄ ՄԿՈՅԱՆԻ ԵՎ ԱՆԻ ԱՐՏԵՄ ՄԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ (ԳՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ) ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ Արտեմ Ստեփանի Մկոյանի և Վարդուհի Կամոյի Ղազարյանի դիմումը՝ իրենց անչափահաս երեխաների համար ձեռք բերվող անշարժ գույքը (գնման իրավունքը) գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2021 թվականի հունիսի 25-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 12,կետ 5), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Թույլատրել Վանաձոր քաղաքի Տարոն-2 ԲՇՀ 4 թիվ 24 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչներ Արտեմ Ստեփանի Մկոյանին (ծնված՝ 01.12.1985թ., նույնականացման քարտ՝ 008585226, տրված՝ 07.06.2016թ., 033-ի կողմից) և Վարդուհի Կամոյի Ղազարյանին (ծնված՝ 26.01.1987թ., նույնականացման քարտ՝ 005655246, տրված՝ 09.10.2017թ., 018-ի կողմից) գրավ դնել իրենց անչափահաս երեխաների՝ Սոնա Արտեմ Մկոյանի (ծնված՝ 01.09.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 283493, տրված՝ 02.09.2013թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) և Անի Արտեմ Մկոյանի (ծնված՝ 07.07.2016թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 519756, տրված՝ 11.07.2016թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) համար ձեռք բերվող Վանաձոր քաղաքի Տարոն-2, ԲՇՀ 4, թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանի բաժնեմասերը (գնման իրավունքը):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1353

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՄԱՆԵ ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ Դավիթ Կորյունի Մխիթարյանի և Տաթևիկ Համլետի Կարապետյանի դիմումը՝ իրենց անչափահաս երեխային պատկանող գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2021 թվականի հունիսի 25-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 12, կետ 8) և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի թիվ 13 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչներ Դավիթ Կորյունի Մխիթարյանին (ծնված՝ 13.07.1988թ., նույնականացման քարտ՝ 006013726, տրված՝ 08.02.2017թ., 066-ի կողմից) և Տաթևիկ Համլետի Կարապետյանին (ծնված՝ 14.04.1992թ., անձնագիր՝AS 0242707, տրված՝ 22.06.2018թ., 066-ի կողմից) թույլատրել գրավ դնել իրենց անչափահաս երեխային՝ Մանե Դավիթ Մխիթարյանին (ծնված՝ 02.06.2016թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 519534, տրված՝ 02.06.2016թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) պատկանող Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի թիվ 13 շենքի թիվ 19 բնակարանի բաժնեմասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2021 թվականի Ν 1354

### ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԳՈՌ ՄՀԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԴԱՎԻԹ ՄՀԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ Միեր Կորյունի Մխիթարյանի և Սաթինե Կամոյի Թումանյանի դիմումը՝ իրենց անչափահաս երեխաներին պատկանող գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2021 թվականի հունիսի 25-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 12, կետ 7) և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի թիվ 15 շենքի թիվ 49 բնակարանի բնակիչներ Միեր Կորյունի Մխիթարյանին (ծնված՝ 14.09.1986թ., անձնագիր՝ AS 0252273, տրված՝ 29.06.2018թ., 066-ի կողմից) և Սաթինե Կամոյի Թումանյանին (ծնված՝ 30.04.1987թ., անձնագիր՝ AT 0527852, տրված՝ 22.07.2020թ., 066-ի կողմից) թույլատրել գրավ դնել իրենց անչափահաս երեխաներին՝ Գոռ Միեր Մխիթարյանին (ծնված՝ 24.09.2009թ.,ծննդյան վկայական՝ ԱԲ 014899, տրված՝ 25.09.2009թ., ՔԿԱԳ Վանաձոր տ/բ-ի կողմից) և Դավիթ Միեր Մխիթարյանին (ծնված՝ 25.10.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 586561, տրված՝ 23.10.2017թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) պատկանող Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի թիվ 13 շենքի թիվ 19 բնակարանի բաժնեմասերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հուլիսի 2021 թվականի N 1355

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 802 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոլանդ Մաթոսյանի և Մելինե Առաքելյանի դիմումը, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Լոռի» մասնաճյուղի կառավարիչ Ա. Թումանյանի 16.06.2021 թվականի թիվ 61-0399 տեղեկանքը, Նատալի Ռոլանդ Մաթոսյանի 26.03.2021 թվականին տրված թիվ ԲԱ 378700 ծննդի մասին պետական վկայականը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 ապրիլի 2021 թվականի «Անչափահասներ Էդիկ Ռոլանդ Մաթոսյանի և Ռաֆֆի Ռոլանդ Մաթոսյանի համար ձեռք բերվող անշարժ գույքը (գնման իրավունքը) գրավ դնելու մասին» թիվ 802 որոշման կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Անչափահասներ Էդիկ Ռոլանդ Մաթոսյանի, Ռաֆֆի Ռոլանդ Մաթոսյանի և Նատալի Ռոլանդ Մաթոսյանի համար ձեռք բերվող անշարժ գույքը (գնման իրավունքը) գրավ դնելու մասին»:

2. Որոշման մեջ «Ռաֆֆի Ռոլանդ Մաթոսյանի (ծնված՝ 25.03.2019թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 098384, տրված՝ 25.03.2019թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից)» բառերից հետո լրացնել «և Նատալի Ռոլանդ Մաթոսյանի (ծնված՝ 26.03.2021թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 378700, տրված՝ 26.03.2021թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից)» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1356

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ 69/1-266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սամվելի Ասլանյանի դիմումը, Սիրանույշ Սամվելի Ասլանյանի 20.05.1969 թվականին տրված թիվ I-ЗЖ 1199467 ծննդյան վկայականը և ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1997 թվականի մարտի 27-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 69/1-266 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1.Որոշման 1-ին կետի աղյուսակում «Ասլանյան Սիրանուշ Ս.» բառերը փոխարինել « Ասլանյան Սիրանույշ Սամվելի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1357

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2189 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Վլադիմիրի Ռեստևանյանի, Գևորգ Վլադիմիրի Ռեստևանյանի և Կարինե Սերգեյի Զաքարյանի դիմումը, 19.09.2014թ տրված ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0990/02/14 քաղաքացիական գործով վճիռը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 30/03/2021թ. թիվ Մ-30032021-06-0002 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 07 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 2189 որոշումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 դեկտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Կարբիշևի փող թիվ 20 հասցեի բնակելի տան և շինությունների նկատմամբ Գուրգեն Վլադիմիրի Ռեստևանյանի, Գևորգ Վլադիմիրի Ռեստևանյանի և Կարինե Սերգեյի Զաքարյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 2189 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում և 1-ին կետում «472.3» թիվը փոխարինել «448.8» թվով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 07 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 2189 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1358

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 756 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 13 ապրիլի 2021 թվականի թիվ 756 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25/05/2021 թվականի թիվ Կ-25052021-06-0130 որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 ապրիլի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 49 շենքի հարավարևելյան մասում ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, տաղավարն օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 756 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետում «դասվող» բառը փոխարինել «չդասվող» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1359

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 50-9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐՈՆ ՍԵՅՐԱՆԻ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տարոն Սեյրանի Քերոբյանի 22.01.2021թ. թիվ 902 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21042021-06-0034 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 50-9/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.41քմ) մետաղական ավտոտնակը 59280 (հիսունինը հազար երկու հարյուր ութսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 22.8քմ մակերեսով հողամասը 103150 (հարյուր երեք հազար հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Տարոն Սեյրանի Քերոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Տարոն Քերոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1360

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 94 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԾԱԾԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Վաղարշակի Հակոբյանի 12.05.2021թ. թիվ 6764 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 94 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.52քմ) ավտոտնակի, 4.8քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 82.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, ծածկը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 94 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 94-29/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի  N 1361

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԻՆԵ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԱՐԱԲՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԳԱԼՈՒՍՏԻ ԲՐՈՒԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Շահումյանի Մարաբյանի և Ռոբերտ Գալուստի Բրուդյանի 22.01.2021թ. թիվ 952 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23062021-06-0042 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի բ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց թիվ 6-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 8.75քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.16քմ) խանութը 204750 (երկու հարյուր չորս հազար յոթ հարյուր հիսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 8.88քմ մակերեսով հողամասը 40180 (քառասուն հազար հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմինե Շահումյանի Մարաբյանին և Ռոբերտ Գալուստի Բրուդյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմինե Շահումյանի Մարաբյանի և Ռոբերտ Գալուստի Բրուդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել խանութի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1362

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-3/5, ԹԻՎ 3-2/3 ԵՎ ԹԻՎ 3-2/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՀԱԳՆ ՄԻՇԱՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Միշայի Նալբանդյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19042021-06-0039, թիվ 07062019-06-0017 և թիվ 20052019-06-0019 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 3-3/5, թիվ 3-2/3 և թիվ 3-2/1 հասցեներում գտնվող, Վահագն Միշայի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02038հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 188.14քմ ընդհանուր մակերեսով տարածքները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան փողոց, թիվ 3-2/1 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1363

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 6/8 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաիսա Արտյուշայի Լոքյանի 28.01.2021թ. թիվ 02/1277 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.05.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-67/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 24.06.2021թ. ներկայացված թիվ ՔՏՄ/09.2.4/6961-21 գրությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 6/8 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող ընդհանուր 327.82քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 302.31քմ) հասարակական գործառնական նշանակության շինությունների (որից՝ 95.02քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 85.5քմ) ավտոտեխսպասարկման կետը, 61.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 54.03քմ) ավտոտեխսպասարկման կետը, 119.06քմ արտաքին ընդհանուր մակերեսով (ներքին մակերեսը՝ 110.14քմ) սննդի օբյեկտը (որից՝ 59.06քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 52.65քմ) սննդի օբյեկտը, 58.28քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 55.77քմ) ծեղնահարկը, 1.72քմ մակերեսով աստիճանահարթակը և 52.64քմ մակերեսով ծածկը) և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ

հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 392.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:

3.Փոխել Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 6/8 հասցեին կից գտնվող հասարակական գործառնական նշանակության շինությունների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.0392հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված հասարակական գործառնական նշանակության շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակության շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին հասարակական գործառնական նշանակության շինությունները և հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 6/8 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Շիրակի խճուղի, թիվ 6/8-1 հասարակական սպասարկման օբյեկտներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1364

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/42Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տերյան փողոց թիվ 4/42գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տերյան փողոց թիվ 6-6/8 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1365

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂ ԹԻՎ 84Գ/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զարիկ Ազատի Պետրոսյանի և Գագիկ Միշայի Հովհաննիսյանի դիմումը, 29.05.2014թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2861 և սեփականության իրավունքի թիվ 2860 վկայագրերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1904229 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փող թիվ 84գ/1 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նար-Դոսի փողոց, թիվ 84-3/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1366

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1-16/1 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Ձաքարյան փողոց թիվ 1-16/1 հասցեի արևելյան մասում գտնվող 0,00177հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ձաքարյան փողոց, թիվ 1-16/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 1367

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂ ԹԻՎ 17Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Միքայելի Մկրտչյանի դիմումը, 13.04.2021թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1607 (նոտարական ակտի կոդ: 763-20210412-84-5038501) և թիվ 1605 (նոտարական ակտի կոդ: 763-20210412-84-5038481) վկայագրերը, 16.04.2021թ. ՔԿԱԳ Վանաձորի տարածքային բաժնի կողմից տրված թիվ 648 գրությունը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1917316 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

